ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ, JOURNALISM, ЖУРНАЛИСТИКА

ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԷԹՆՈՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՄԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔ ԵՎ ԴՐԱ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՎԱՎԵՐԱԳՐԱԿԱՆ ԿԻՆՈՅՈՒՄ *

ՀՏԴ 070:355.01:327.8 *DOI: 10.52063/25792652-2023.1.16-89*

ՆԱԻՐԱ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ
ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի տպագիր և հեռարձակվող լրատվամիջոցների ամբիոնի ասպիրանտ, «Ռազմական լրագրություն» դասընթացի դասախոս, ՊՆ «Զինուժ» հեռուստաձրագրի լրագրող, ԶՈՒ կապիտան, ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
nairaham@gmail.com
ORCID: 0000-0002-3894-5259

Կարելի է ասել, որ Ադրբեջանական քարոզչամեքենան հակահայկականության մասով մշտապես կատարելագործման ուղի է անցնում: 2020 թվականին Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցած պատերազմից հետո այն աչքի է ընկնում ռազմավարական հաղորդակցության ավելի կոպիտ գործիքների կիրառմամբ՝ այդ թվում շեշտը դնելով հոգեբանական ներազդման միջոցներից հիշողության քաղաքականության վրա: Այս հասկացությունը ներկայացնելիս ուշագրավ է հատկապես այն, որ հարկավոր է դրա համատեքստում դիտարկել տեղեկույթը, որը օգտագործվում է հիշողություն դառնալու համար, և հիշողությունը, որը օգտագործվում է որպես տեղեկութային զենք: Վերջինիս «թիրախը» սոցիալական խմբերի գիտակցական դաշտն է, և այս պարագայում այն օգտագործվում է ըստ ռազմաքաղաքական վերնախավի հետաքրքրությունների:

Ասվածի վառ ապացույցն են դիտարկված փաստական նյութերը, որոնց համապարփակ ուսումնասիրությունը կվկայի այն, որ 2020 թվականին Լեռնային Ղարաբաղում տարած հաղթանակը Ադրբեջանը փորձում է ամրապնդել մենթալ պատերազմում հաղթանակի հավակնություններով՝ գործի դնելով ներազդման բազմազան միջոցներ, այդ թվում՝ հիշողության քաղաքականությունը: Միևնույն ժամանակ՝ օգտագործվում են ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների տարածվածությունն ու հնարավորությունները՝ աննախադեպ մեծացնելով լրատվամիջոցների ազդեցությունն անհատի և հասարակության վրա, ինչը զանգվածային գիտակցությունը միֆականացման թիրախ դարձնելու նպատակ ունի:

Իբրև հետազոտական մեթոդ ընտրվել է հետպատերազմական շրջանում Ադրբեջանի քաղաքական պատվերի արգասիք հանդիսացող՝ վավերագրական ֆիլմերում օգտագործված մեթոդների և գործիքների քննությունը, դրանց շուրջ սոցիալական հարթակներում արձագանքների ուսումնասիրությունը: Որպես արդյունք՝ հնարավոր է դարձել առանձնացնել նյութեր, որոնք վկայում

* Հոդվածը ներկայացվել է 14.12.2022թ., գրախոսվել՝ 14.02.2023թ., տպագրության ընդունվել՝ 30.04.2023թ.:

են, որ իր քաղաքական նպատակներին հասնելու համար այդ երկրի ռազմաքաղաքական ընտրախավը գործի է դնում բոլոր հնարավորությունները՝ մինչև անգամ ներգրավելով միջազգային մեդիաոլորտի ազդեցիկ ներկայացուցիչների:

Մեր ուսումնասիրությունը նպատակ ունի ընդգծելու տեղեկատվական հարթակում օր առաջ Հայաստանի՝ տեղեկատվական գերակայության ապահովման անհրաժեշտությունը և այն ռիսկերը, որոնք կարող են առաջ գալ Ղարաբաղյան հակամարտության շուրջ հետագա քաղաքական զարգացումների տեսակետից:

Հիմնաբառեր՝ *Հիշողության քաղաքականություն, էթնոքաղաքականություն, մենթալ պատերազմ, տեղեկութահոգեբանական պատերազմ, սոցիալական պատերազմ, տեղեկատվական գերակայություն, հակամարտային ժուռնալիստիկա, Ղարաբաղյան հակամարտություն:*

ՆԱԽԱԲԱՆ

Կոգնիտիվ պատերազմներ, կիբեռպատերազմներ, ցանցակենտրոն պատերազմներ... Պատերազմների բնույթն ու բովանդակությունը մշտապես փոխվում են: Եթե մեր պատկերացրած և ընկալած դասական պատերազմներում նպատակը տարածքի նվաճումն էր, հակառակորդի կենդանի ուժի ոչնչացումը, ժամանակակից պատերազմներում (օրինակ՝ կիբեռպատերազմներում)՝ ենթակառուցվածքների ոչնչացումը, ապա ապագայի պատերազմներում՝ սոցիալական ինքնագիտակցության ոչնչացումն է, քաղաքակրթական հիմքերի խարխլումը: Որոշ տեսաբաններ պատերազմի այս տեսակն անվանում են մենթալ պատերազմ (Ильницкий 3-7): Սա պատերազմ է՝ ուղղված սոցիալական խմբերում գիտակցական դաշտի, աշխարհայացքի փոփոխությանը: Եթե կենդանի ուժն ու ենթակառուցվածքները կարելի է այս կամ այն կերպ ինչ-որ ժամանակամիջոցում վերականգնել, ապա խարխլված աշխարհայացքի վերականգնումը, մասնագետների դիտարկմամբ, գրեթե անհնար է: Բնական է, որ պատերազմների վարման այս նոր մշակույթը ունի նաև իր նոր գործիքակազմն ու մեթոդները: Այդ շրջանակներում պատմական կեղծ հիշողության ձևավորումն ու կիրառումը որպես քաղաքական կամքի արտահայտման գործիք բավական ազդեցիկ են: Այդ գործոնի դրսևորման և կիրառության ամենահարմար հարթակներից մեկը լրատվական դաշտն է: Ուշադրությամբ հետևելով ադրբեջանական վերջին երկու տասնամյակների ՁԼՄ-ների, վավերագրական ֆիլմերի նյութին՝ գալիս ենք համոզման, որ հակառակորդ պետությունը որպես իր ռազմաքաղաքական նպատակներին հասնելու հիմնական միջոց դիտարկում է հիշողության քաղաքականությունը: Հաշվի առնելով դիտարկված փաստերը, դրանց ազդեցությունը՝ կատարել ենք որոշակի եզրակացություններ և առաջարկություններ: Ստորև ներկայացված ուսումնասիրությամբ ավելի համապարփակ հասկանանք՝ ինչ ասել է հիշողության քաղաքականություն, և ինչպես է դա օգտագործում մեր երկրի դեմ ադրբեջանական վերնախավը:

ՊԱՏՄԱԿԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԶԻՆԱՆՈՑՈՒՄ ՈՐՊԵՍ ՏԵՂԵԿՈՒԹԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՆԵՐԱԶԴՄԱՆ ՄԻՋՈՑ

Դեռևս 2008 թ. հունվարին, մասնակցելով Գուզանլի գյուղում Հ. Ալիևի թանգարանի բացմանը, Ի. Ալիևը հայտարարել է, որ «1918 թ. Երևանը տրվեց հայերին… դա մեծ սխալ էր… Երևանի խանությունը ադրբեջանական պետություն էր,

հայերն այստեղ հյուր էին» («Azerbaijani president: Armenians are guests in Yerevan»): Ադրբեջանի քաղաքական վերնախավի գերխնդիրն է համոզել ադրբեջանական հասարակությանը, որ հակամարտության էությունն է վերականգնել «պատմական արդարությունը», այն է՝ վերադարձնել հայերի հսկողության տակ գտնվող բոլոր ադրբեջանական տարածքները, ներառյալ՝ ներկայիս ՀՀ տարածքը: Դրանով իսկ Ղարաբաղյան հակամարտությունը տեղափոխվում է ՀՀ-ի նկատմամբ տարածքային ոտնձգությունների հարթություն, և գիտական կեղծ հիմքեր են ստեղծվում հետագայում ՀՀ-ի դեմ ռազմական ագրեսիայի համար, որը Ադրբեջանական իշխանությունները փորձում են ամրապնդել նաև մեդիայի միջոցով՝ ակտիվ կիրառելով *կեղծ հիշողության քաղաքականության մեխանիզմները*:

Գիտական շրջանակներում կոլեկտիվ հիշողության նկատմամբ մեծ հետաքրքրությունը սկիզբ է առել 1970-ականներին, երբ այն դիտարկվում էր որպես սոցիալական, ոչ թե անհատի հատկանիշ (Chwedoruk 255): Կոլեկտիվ հիշողությունը, իր հերթին, ձևավորում է պատմական հիշողությունը: Եվ բնական է, որ այս երևույթը քաղաքական կամք թելադրողների ձեռքին կարևոր խաղաքարտի է վերածվում: Պատմական հիշողության քաղաքականությունը, որը այսօր երբեմն կոչում են հիշողության քաղաքականություն, իր սկզբնավորման ժամանակներից՝ 1980-ական թվականներից, երբ հայտնվեց գիտական գրականության էջերում (պատմության քաղաքականությունը օգտագործվել է առնվազն լուսավորչական շրջանից), եղել է քաղաքագետների և պատմաբանների, ինչպես նաև սոցիոլոգների, փիլիսոփաների և մարդաբանների հետաքրքրության դաշտում: «Հավաքական պատմական հիշողությունը հանդիսանում է այն կրող համայնքի ինքնության հիմնարար ցուցիչներից մեկը, ինչպես նաև արժեքների և գաղափարների ոլորտում նման համայնքի ինտեգրման կարևոր գործոն: Կոլեկտիվ հիշողության մեջ շրջանառվող բովանդակությունը որոշում է համայնքի անդամների վերաբերմունքը և նրանց իրականացրած գործողությունների ձևը միմյանց և այլ խմբերի անդամների նկատմամբ (և այլ խմբերի նկատմամբ՝ որպես մեկ ամբողջություն): Նրանք նաև ազդում են տվյալ համայնքում տիրող նորմերի համակարգի վրա: Հատկապես կարևորն այն է, որ ժամանակակից զանգվածային հասարակություններում պատմական հիշողությունը կարծես կառավարման և սոցիալական վերահսկողության կարևոր գործիք է» (Malczewska-Pawelec & Pawelec 17): Քաղաքագետները նախընտրում են «պատմության քաղաքականություն» տերմինը (նրա լեզվական նախատիպը գերմանական Geschichtspolitik-ն է), մինչդեռ «հիշողության քաղաքականությունը» (ծագումով անգլո-սաքսոնական մշակույթից) նախընտրում են սոցիոլոգները (Kącka 63–64): Այս երկու հասկացություններից բացի օգտագործվում է «պատմական հիշողության քաղաքականություն» տերմինը (Malczewska-Pawelec & Pawelec 18): Նկատենք, որ «հիշողության վերակառուցման գործընթացը ինտելեկտուալ վակուումում տեղի չի ունենում: Դրա համատեքստն ամենից շատ որոշվում է ներկայիս պատմական հիշողությամբ՝ որպես համայնքի նախկին փորձառությունների արդյունք, ներառյալ նաև մինչ այժմ իրականացված հիշողության քաղաքականության ազդեցությունները» (Malczewska-Pawelec & Pawelec 30):

Հասարակությունների պատմական հիշողության վերաբերյալ արժեքավոր ուսումնասիրություններ են կատարվել հատկապես Արևմտյան Եվրոպայում հետպատերազմյան տասնամյակներում : Ֆրանսիական հեղինակներից մասնավորապես աչքի են ընկնում Մորիս Հալբվաքսի աշխատանքները: Հալբվաքսը նկարագրում և վերլուծում է հասարակության շրջանում պատմական հիշողության ձևավորման, պահպանման և ձևափոխման մեխանիզմները: Ըստ նրա՝ ազգի պատմական հիշողությունը ձևավորվում է ազգի մաս կազմող անհատների և խմբերի (ինչպես օրինակ՝ ընտանիք, գյուղական և քաղաքային համայնք) հիշողությունների հիման վրա: Սակայն միշտ չէ, որ պատմական հիշողությունը ձևավորվում է այս ճանապարհով՝ ներքևից վերև: Բազմաթիվ են դեպքերը, երբ պատմության մասին

որոշակի պատկերացումներ ստեղծում (հորինում) են պետական վերնախավը կամ մտավորականության որոշ շերտեր, և դրանք այնուհետև կրթության համակարգի և քարոզչության միջոցով ներմուծվում են հասարակական շրջանակներ՝ հիմք դառնալով պատմության մասին անհատական պատկերացումների ձևավորման համար (Halbwachs): Հայազգի ուսումնասիրող Միքայել Զոլյանը պատմական հիշողության ուսումնասիրությանը նվիրված իր աշխատության մեջ շեշտում է, որ պատմական հիշողության խնդիրը հասարակության մեջ առավել սրվում է, երբ այն ձևավորվում է վերևից ներքև ճանապարհով: Այս գործընթացում հատուկ դերակատարում են ստանձնում այն խմբերը, որոնք քաղաքական և մշակութային առումով տիրապետող դիրքեր են ձբաղեցնում, այսինքն՝ քաղաքական վերնախավը և մտավորականները: «Այս խմբերը միշտ չէ, որ շահագրգռված են անցյալի մասին օբյեկտիվ հիշողությունների գոյությամբ, արդյունքում փորձ է արվում խստորեն վերահսկել մշակութային հիշողության ձևավորումը: Այլ կերպ ասած, իշխող վերնախավը ձգտում է, որ հասարակությունը հիշի ոչ թե այն, ինչ տեղի է ունեցել, այլ այն, ինչ ձեռնտու է հիշել վերնախավի տեսակետից» (Զոլյան 130): Ադրբեջանում դեռ խորհրդային տարիներին ստեղծվում էր «պատմական հիշողության» այնպիսի հայեցակարգ (Шнирельман 120-122), որի համաձայն հայերը, մասնավորապես՝ Լեռնային Ղարաբաղի հայերը, ներկայացվում էին կա՛մ իբրև օտար, եկվոր տարր, կա՛մ իբրև «հայացված» աղվաններ (որոնք նույնացվում էին ադրբեջանցիների հետ): Հետխորհրդային տարիներին այդ գաղափարները դարձան Ադրբեջանի իշխանական վերնախավի պաշտոնական գաղափարախոսության բաղադրամաս (Զոլյան 106):

Բաքվի քայլերը Ղարաբաղում ուղղված էին տեղի հայության՝ երկրամասի նկատմամբ բոլոր տեսակի և առաջին հերթին պատմահրավական իրավունքներից զրկելուն և ԼՂԻՄ-ում ադրբեջանական ներկայությունն ամրապնդելուն: Փաստորեն, ադրբեջանական պատմագիտությունը պետք է գիտականորեն հիմնավորեր ադրբեջանական ժողովրդի անքակտելի պատմական իրավունքը Լեռնային Ղարաբաղի տարածքի նկատմամբ հակառակը վկայող բազմաթիվ փաստավավերագրական տեղեկույթի առկայության պայմաններում: Խնդիրը բարդանում էր այն պատճառով, որ հետագայում «ադրբեջանցի» կոչված թյուրքալեզու մահմեդական քոչվոր ցեղերը, անգամ տվյալ տարածքում հայտնվելուց հետո, միշտ էլ կազմել են չնչին փոքրամասնություն: Դրա հետ մեկտեղ հայերի կրոնական պատկանելությունը բացառում էր ԱդրԽՍՀ տարածքում առկա մշակութային ժառանգությունը մեխանիկորեն «ադրբեջանական» հռչակելու գործելաոճի կիրառումը (Աթանեսյան 79): Սակայն Ադրբեջանական քաղաքական վերնախավը տարիների ընթացքում ոչ միայն Ադրբեջանի «պատմությունը» հորինելու, տարածաշրջանի ժողովուրդների ծագումնաբանությունը կասկածի տակ դնելու և նենգափոխելու, այլև սոցիալ-հոգեբանական ներազդման ամենատարբեր մեթոդներ ու միջոցներ կիրառելու միջոցով կարողացավ շոշափելի արդյունքներ արձանագրել տարածաշրջանում թուրքական տարրի վարած էթնոքաղաքականության տեսանկյունից:

Միևնույն ժամանակ, Ղարաբաղյան հակամարտության սկզբնական փուլում ադրբեջանական ԽՍՀ-ը որդեգրեց խորհրդային օրինականության պահապանի դիրքերից հանդես գալու գործելաոճ՝ ներքին օգտագործման համար նախատեսելով պնդումներ, համաձայն որոնց՝ ղարաբաղցիների՝ Հայաստանի հետ վերամիավորման պահանջը ոչ թե ինքնորոշման, այլ Ադրբեջանի տարածքային ամբողջականության նկատմամբ «եկվոր հայերի» ոտնձգության դրսևորում է (Касум-Заде и Гамзаева): Այսօր այս թեզը ակտիվ գործի է դրվում միջազգային հանրությանը հակամարտության պատմության համատեքստում ապակողմնորոշելու հարցում:

Այսպիսով՝ աղավաղվում և պաշտոնական Բաքվի քաղաքական նպատակներին են համապատասխանեցվում նորագույն շրջանում Ղարաբաղյան հակամարտության ծագման պատճառները և 20-րդ դարի 80-ական թվականների

վերջին դրա սրման խնդիրը, ադրբեջանական պետության կենսագործունեությունը և իրողությունները, իրադարձությունների պատճառահետևանքային կապը և ռազմական գործողությունների ընդհանուր տրամաբանությունն ու իրական հետևանքները (մարդկային կորուստներ, տարածքներ, փախստականներ): Խեղաթյուրվում են նաև հիմնախնդրի կարգավորման միջազգային-իրավական հիմքերը (Казимиров): Վերոնշյալն առավել ակնառու է մեզ հետաքրքրող թեմայի շրջանակներում առանձնացված վավերագրական մի շարք ֆիլմերի վերլուծություններում, որոնք նկարահանվել են 2020 թվականի պատերազմից հետո:

ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՎԱՎԵՐԱԳՐԱԿԱՆ ՖԻԼՄԵՐԸ ՈՐՊԵՍ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՑՄԱՆ ԳՈՐԾԻՔ

Ադբեջանական պետական քաղաքականության ուշագրավ մի կողմն էլ անընդհատ դիրքերը տեղեկատվական հարթակում ամրապնդելն է՝ օգտագործելով մինչև անգամ միջազգային բոլոր լծակներն ու համագործակցային ռեսուրսները: Ադրբեջանական զինուժի վերահսկողության տակ անցած տարածքներում իրականացվում են մեծաքանակ նկարահանումներ, կազմակերպվում են շրջայցեր ոչ միայն այդ երկրում միջազգային ներկայացուցչությունների բարձրաստիճան պաշտոնյաների, այլ նաև՝ միջազգային լրատվամիջոցների ներկայացուցիչների ներգրավմամբ (CBC TV Azerbaijan): Նկարահանված վիդեոնյութերն ուսումնասիրելիս ակնհայտ է դառնում, որ ադրբեջանական կողմը փորձ է անում միջազգային հանրության ուշադրությունը շեղել այն հանգամանքից, որ սա էթնոքաղաքական կոնֆլիկտ է (Համբարձումյան 47-58) և քիչ աղերս ունի լոկ տարածքային վեճ լինելու հետ: Բոլոր տեսանյութերում առաջ է քաշվում Ադրբեջանի տարածքային ամբողջականության հանդեպ հայերի ոտնձգությունների մասին թեզը, հայերի՝ տարածաշրջանում եկվոր լինելու իրենց իսկ առաջ բերած վարկածը, և այս թեզերը շարունակվում են հայերի ագրեսոր, վանդալ լինելու շուրջ քարոզչությանը ներհյուսված: Շեշտադրված խոսվում է այն մասին, որ հայերն ընդունակ չեն որևէ բան շենացնելու, և այս բոլոր տարածքները երեք տասնամյակների ընթացքում ավիրել են, այրել, թալանել ու ոչնչացրել: Ուշադրության են արժանի հատկապես ֆիլմերը, որոնցում «ադրբեջանական ճշմարտությունները» արտահայտվում են ոչ ադրբեջանցու շուրթերով: Այդ ֆիլմերից շատերում իբրև հայերին բնորոշող բառ օգտագործվում է «վանդալ» տերմինը, իսկ մեկնաբաններից մեկը համեմատականներ է տանում մինչև անգամ Հերոսիմայի հետ («Агдам. Фильм Гии Саралидзе»): Վստահորեն կարելի է կարծել, որ նույն ջանասիրությամբ նա չէր խոսի Մարաղայի, Բաքվի ջարդերի, կամ ավելի վաղ տեղի ունեցած իրադարձությունների մասին, որոնք խիստ առանցքային նյութ պետք է լինեին հակամարտությունը վերլուծողի համար:

2021 թվականի փետրվարի վերջին "Вестника Кавказа"-ի նկարահանող խումբն այցելել էր Ադրբեջանի վերահսկողության տակ անցած տարածքներ՝ Աղդամ, Ֆիզուլի, Ջաբրայիլ և Զանգելան՝ Իրանի և Հայաստանի սահման: Ինչպես նշված է տեսանյութի յութուբյան էջի մեկնաբանություններում, այցի նպատակն է եղել արձանագրել տարածքում տեղի ունեցած «ավերածությունների մասշտաբները», որոնք կատարել են հայկական ԶՈՒ-ի օկուպացիոն ուժերը (խոսքը1990-ականների մասին է): Առանձին ֆիլմ նկարահանվել է նաև Շուշիում («Гия Саралидзе в Шуше»): Ֆիլմի հեղինակը հեռուստառադիոլրագրող Գիա Սարալիձեն է: Վերջինս իր հեղինակային խոսքում նշում է, որ երբ սկսվեց երկրորդ Ղարաբաղյան պատերազմը, մեկնաբանների, լրագրողների և հետազոտողների ուշադրությունը սևեռված էր ոչ թե փաստերի և վերլուծության վրա, այլ էմոցիաների: Փաստեր և վերլուծություն հասկացությունների քողի ներքո հեղինակը խիստ կողմնապահորեն է ներկայացնում՝ մասնավորապես հեղինակային ֆիլմաշարում հակամարտությանն առնչվող բոլոր փաստերը սկսելով միայն խորհրդային տարիներից: Հակամարտությունը

բնութագրելով որպես հետխորհրդային տարածքում ամենահինն ու երկարատևը՝ նա որևէ փորձ չի անում բացահայտելու խնդրի ծագման իրական պատմությունը և որ, այս պարագայում, մեր համոզմամբ, ամենակարևորն է՝ ժամանակագրությունը: Նրա կատարած «վերլուծություններում» չկան այն մասնագիտական հարցադրումները և գոնե պատասխանների որոնման ճանապարհները, որոնք լույս կսփռեն հարցի ուսումնասիրության վրա (ինչպես օրինակ՝ իրականում ինչ տարածքներ են դրանք, ինչպես Լեռնային Ղարաբաղը դարձավ ինքնավար մարզ և ինչպես, ինչ հանգամանքներում, ում քաղաքական կամարտահայտմամբ, երբ այս տարածաշրջանում ձևավորվեց Ադրբեջան պետությունը, և որ ամենկարևորն է՝ ինչպես այս տարածաշրջանում հայտնվեցին թաթարները), և սրան ի հակառակն՝ կան արտահայտություններ, շեշտադրումներ, որոնք թողնում են տպավորություն որոշակի զարգացվածության մակարդակ ունեցող խավի վրա, ինչը նպատակային է ադրբեջանական ռազմաքաղաքական ղեկավարության համար:

Ուսումնասիրված մի շարք լրատվամիջոցներ, ինչպես ադրբեջանական, այնպես էլ միջազգային, խեղաթյուրում են պատմությունը՝ շրջանցելով փաստերը, միտումնավոր կամ ակամա բաց թողնելով երեսուն տարիների քաղաքական անցուդարձի ուսումնասիրությունը:

Բի-Բի-ՍԻ-ն նույնանման սյուժեով անդրադարձել է խնդրին՝ երկուստեք ներկայացնելով կարծիքներ: Այնուամենայնիվ, այստեղ ևս հստակ չէ հակամարտության էությունը («Нагорный Карабах: жизнь после войны: Документальный фильм Би-би-си»): Կրկին ներկայացված են ադրբեջանցիների՝ իրենց նախկին բնակավայրեր վերադարձի օրինակներ՝ անհատական պատմությունների տեսքով, որոնք ընդգծված հուզական են, և հակամարտության պատմությանը թերի տեղյակ դիտողը, ըստ ստացած տեղեկույթի, կարող է այլ պատկերացումներ ձևավորել: Հակառակ կողմում տեղահանված արցախցիներն են՝ անորոշության մեջ:

Հակամարտությունների լուսաբանման որոշ նորմեր հուշում են, որ այն պատկերացնելու համար անհրաժեշտ է խորամուխ լինել դրա ծագման պատմության մեջ: Պետք է ընդունել, որ լրագրությունն իր բուն էությունից շեղվում է՝ վերածվելով կեղծիքի տարածման գործիքի՝ հեռու մասնագիտական մոտեցումներից և նպաստելով կեղծ պատմական հիշողության ձևավորմանը:

Այդ թվում մտահոգիչ են այն ֆիլմերը, որոնք նկարահանում և տարածում են ադրբեջանական աղբյուրները: Դրանք առաջին հայացքից «անմեղ» մարդկային պատմություններ են անհատների մասին, որոնք ժամանակին ստիպված են եղել թողնել ու հեռանալ իրենց բնակավայրերից: Ակնհայտ է, որ ֆիլմերի պատրաստման հատուկ տեխնիկա է կիրառված, բավական ուժեղ ընդգծված է հուզական ֆոնը: Դրանցում իրենց նախկին բնակավայրեր՝ Քարվաճառ, Ջրական, Շուշի, վերադարձող մարդիկ են՝ իրենց հիշողություններով ու ապրումներով: Ֆիլմերից մեկում Քարվաճառ վերադարձած ադրբեջանցին իր հետ բերել է պապական տան բանալին և պատմում է, թե ինչպես երեսուն տարի մասունքի պես պահվել է այդ բանալին՝ հավատով, որ մի օր կվերադառնան: Այս ֆիլմերը, մեր դիտարկմամբ, ավելի հաճախ ներքին լսարանում քարոզչության նպատակով են պատրաստվում, սա հենց հիշողության քաղաքականությունն է, հիշողության, որը ադրբեջանական քաղաքական վերնախավի «ընտրությամբ» սկսվում է միայն խորհրդային տարիներից և համեմվում է կորստի ու վերագտնման էմոցիաներով՝ լերկ փաստերից, պատճառների, հետևանքների վերանայման անհրաժեշտությունից:

Նկատենք, որ նաև հայկական տիրույթում հակամարտության շուրջ ընկալումները և գնահատականներն այսօր արդեն ոչ միանշանակ են, նույն մենթալ պատերազմի գործիքների կիրառմամբ ժամանակի ընթացքում, այնուամենայնիվ, ստացվել է հասարակական որոշ շերտերի այս կամ այն հարցի շուրջ տարհամոզել ու դրանով իսկ խոցելի դարձնել:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով՝ մեր դիտարկումներով և փաստերի համադրմամբ հասկանալի է դառնում, որ ժամանակակից հակամարտություններում տեղի ունեցող փոփոխություններն առավելապես համակարգային բնույթ ունեն և վերաբերում են ոչ թե հանրային կյանքի առանձին ոլորտներին, այլ ընդգրկում են հասարակական հարաբերությունների ողջ համակարգը՝ առնչվելով նաև մարդու գիտակցության և ենթագիտակցության հետ (Դեմիրճյան 11): Մարդու գիտակցականը պայմանավորող կարևոր իրողություններից մեկը հիշողությունն է՝ անցյալի հիշողությունը և այն հիշողությունը, որը ժառանգվում է: Վավերագրությունը կարևոր է հիշողության ձևավորման համար, իսկ մեդիադաշտը, նաև որպես վավերագրող, այս առնչությամբ մեծ ծավալի պատասխանատվություն է կրում:

Վավերագրությունը աղբյուր է պատմության համար, այն հիշողություն է, որը վաղուց արդեն ժամանակակից աշխարհում քաղաքական գործիք է դարձել: Պետք է հաշվի նստել այն իրականության հետ, որ ժամանակի հետ խեղաթյուրվում են նաև պատմական եղելությունները՝ խիստ կասկածի տակ առնելով հայկական պետականության և հայերի անվտանգության երաշխիքները՝ իբրև ազգային միավորում : Փոխարենը՝ Ադրբեջանը, պատմական ճշմարտությունները շրջանցելով, կեղծ հիշողության քաղաքականության ձևավորմամբ միտումնավոր փոփոխում է տարածաշրջանի ժողովուրդների պատմությունը՝ իր բոլոր բաղկացուցիչներով: Կարծում ենք՝ լրատվամիջոցների ներկայացուցիչներն ու մեդիաարտադրանքով զբաղվող կառույցները պետք է պատասխանատվություն ստանձնեն ալիևյան էթնոքաղաքական կամարտահայտության գործիքը դառնալու առնչությամբ: Անհրաժեշտ է, որ մեդիադաշտի ներկայացուցիչները գիտակցեն, թե նման ռազմավարությունը ինչ ռիսկերով է հղի, ոչ միայն հայերի համար:

Մեր դիտարկմամբ՝ բացթողում է այն, որ Հայաստանում չկան ինստիտուցիոնալ կառույցներ, որոնք պիտի զբաղվեին մտահոգիչ այս հարցերից բխող համապատասխան ռազմավարության մշակմամբ: Ըստ ուսումնասիրված նյութի՝ կարծում ենք, որ եթե մոտակա ժամանակահատվածում Հայաստանում չձևավորվի պետական ներքին և արտաքին տեղեկատվական քաղաքականության հստակ հայեցակարգ, Ադրբեջանի վարած էթնոքաղաքականության և դրա շրջանակներում օր օրի ավելի մեծ թափով վարվող տեղեկատվական գրոհի պարագայում հայկական կողմը կարող է ձախողել նաև մենթալ պատերազմը, ինչը հղի է ազգային անվտանգությանն ուղղված սպառնալիքներով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աթանեսյան, Է., *Պատմության կեղծարարությունների գործոնը Ղարաբաղյան հակամարտության համատեքստում «Հայկական բանակ» ՈԳՀ-ի հավելված «Աշխատանքային տետրեր»*, 4 (16). 2010:
2. Դեմիրճյան, Մովսես. *Զանգվածային գիտակցության միֆերի փոխակերպումները ճգնաժամային իրավիճակներում*: Մեդիան և տեղեկատվությունը 21-րդ դարի պատերազմներում: Գիտաժողովի նյութեր: ԲՊՀ հանրային հաղորդակցման տեխնոլոգիաների գիտաուսումնական կենտրոն, 2021:
3. Զոլյան, Միքայել. *Ադրբեջանում «հիշողության քաղաքականությունը՝ որպես քաղաքական վերնախավի գործիք. «Հայկական բանակ» ՈԳՀ-ի հավելված «Աշխատանքային տետրեր»*, 4 (16). 2010:
4. Զոլյան, Միքայել. *Պատմական հիշողության և ազգային ինքնության քաղաքական ասպեկտները. Ազգային պատմության կառուցումը Խորհրդային Ադրբեջանում. https://web.archive.org/web/20200113112842/http://kantegh.asj-oa.am/633/1/129-138.pdf:*

5. Հակոբյան, Արսեն. *Հակամարտող հիշողություններ. Բուն TV,*https://boon.am/memory-and-conflict/:

6. Համբարձումյան, Նաիրա. *Ղարաբաղյան հակա- մարտության լուսաբանման որոշ պրոբլեմներ էթնոքաղաքականության լույսով. «Հայկական բանակ»*, 3(105), 2020:

7. *Azerbaijani president: Armenians are guests in Yerevan*. «Regnum», 17.01.2008 (http://www.regnum.ru/english/943595.html).

8. Chwedoruk, R. (2018). *Polityka historyczna*. Warszawa: PWN

9. Kącka, K. (2015a). *Polityka historyczna: kreatorzy, narzędzia, mechanizmy działania – przykład Polski*. In: K. Kącka, J. Piechowiak-Lamparska, A. Ratke-Majewska (Eds.). Narracje pamięci: między polityką a historią. Toruń: Wydawnictwo Naukowe UMK.

10. Malczewska-Pawelec, D., & Pawelec, T. (2011). Rewolucja wpamięci historycznej. Porównawcze studia nad praktykami manipulacji zbiorową pamięcią Polaków w czasach stalinowskich. Kraków: Universitas.

11. M. Halbwachs. *On Collective Memory*. Chicago. University of Chicago Press. 1992.

12. «Гия Саралидзе в Шуше»: https://www.youtube.com/watch?v=dhMcMzerBUY.

13. Ильницкий, Андрей. *Выбор России: развилки, угрозы, возможности и решение*. *Евразия. Эксперт*– Выпуск 2– 2021. https://journal.eurasia.expert/S271332140015838-8-1 (дата обращения: 18.02.2022). DOI: 10.18254/S271332140015838-8.

14. Казимиров, В., *Два хельсинских принципа и «атлас конфликтов*. *«Россия в глобальной политике»*, 2007 N 2 (http://www.globalaffairs.ru/number/n_8403):

15. Касум-Заде, Азера. ГамзаеваМахира. *«Агрессия Баку-январь-1990»*, Баку, 1990 (http://www.elibrary.az/docs/aggress.pdf):

16. *«Нагорный Карабах: жизнь после войны: Документальный фильм Би-би-си»,* https://www.youtube.com/watch?v=v_iywHNb0-g&t=10s.

17. Саралидзе, Гия. «Агдам»: https://www.youtube.com/watch?v=48a3M8XmHUE.

18. Тихонов А., *Стратегия обеспечения безопасности.* Курс лекций «Армия и общество» «Красная звезда»., 05.02.2017: http://archive.redstar.ru/index.php/component/k2/item/32172-strategiya-obespecheniya-bezopasnosti:

19. Шнирельман, В. А., *Войны памяти: мифы, идентичнось и политика в Закавказье*. Москва, 2003, стр. 120-122:

20. CBC TV Azerbaijan. Представители зарубежных СМИ и дипкорпуса побывали в Карабахе. https://www.youtube.com/watch?v=x3ajCvL5y04.

WORKS CITED

1. E. B. Atanesyan *Patmut'yan keghc'ararut'yunneri gorc'ony' Gharabaghyan hakamartut'yan hamateqstum*: «Haykakan banak» R'GH-i havelvac' «Ashxatanqayin tetrer», 4 (16). 2010, [*“The factor of historical falsifications in the context of the Karabakh Conflict”.* Armenian Army" RGH supplement; Work notebooks], 4 (16). 2010 (in Armenian)

2. M. Demirtwyan *Zangvac'ayin gitakcut'yan miferi p'oxakerpumnery' twgnajhamayin iravitwaknerum*, e'j 13: *Median ev teghekatvut'yuny' 21I-rd dari paterazmnerum: Gitajhoghovi nyut'er*: BPH hanrayin haghordakcman texnologianeri gitausumnakan kentron, 2021t'. [*Transformations of Myths of Mass Consciousness in Crisis Situations”. Media and Information in the Wars of the 21st Century. Proceedings of the conference*. BSU Public Communication Technologies Research Center, 2021. (in Armenian)

3. «Haykakan banak» R'GH-i havelvac' «Ashxatanqayin tetrer», 4 (16). 2010, M. S. Zolyan, «*Adrbejanum «hishoghut'yan qaghaqakanut'yuny'»` orpes qaghaqakan vernaxavi gorc'iq*»: https://razmavaraget.files.wordpress.com/2010/11/at4-_2010.pdf. [*Appendix of "Armenian Army" military journal" Working notebooks"*, 4 (16). 2010, *The Politics of Memory" in Azerbaijan as a Tool of the Political Elite*",page 106.] (in Armenian)

4. A. Hakobyan, *Hakamartogh hishoghut'yunner*, https://boon.am/memory-and-conflict/ [*"Conflicting Memories"*.] (in Armenian)

5. «Haykakan banak», 3(105), 2020. N. A. Hambard'umyan, *Gharabaghyan hakamartut'yan lusabanman orosh problemner e't'noqaghaqakanut'yan luysov*, e'j 47-58: [*Some Estimates of the Artsakh De-armenianization Issue within the framework of the conflict coverage*] (in Armenian)

6. «*Azerbaijani president: Armenians are Guests in Yerevan*». «Regnum», 17.01.2008 (http://www.regnum.ru/english/943595.html).

7. «*Gija Saralidze v Shushe*»: https://www.youtube.com/watch?v=dhMcMzerBUY https://www.youtube.com/watch?v=v_iywHNb0-g&t=10s. Gia Saralidze in Shushi.

8. Il'nickij, Andrej. «*Vybor Rossii: razvilki, ugrozy, vozmozhnosti i reshenie*». Evraziya. Ekspert– Vypusk 2– 2021. https://journal.eurasia.expert/S271332140015838-8-1 (data obrashcheniya: 18.02.2022). DOI: 10.18254/S271332140015838-8. [*Russia's Choice: Crossroads, Threats, Opportunities, and Solutions* // Eurasia. Expert – 2021. – Issue 2] (in Russian)

9. Kazimirov, V., *Dva hel'sinskih principa i «atlas konfliktov*. «Rossiya v global'noj politike», 2007 N 2: [*The Two Helsinki Principles and the Atlas of Conflicts*. "Russia in Global Affairs"] (http://www.globalaffairs.ru/number/n_8403) (in Russian)

10. Kasum-Zade, Azera. Gamzaeva Mahira. *Agressiya Baku-yanvar'-1990*, Baku, 1990 (http://www.elibrary.az/docs/aggress.pdf):

11. «*Nagornyj Karabah: zhizn' posle vojny: Dokumental'nyj fil'm Bi-bi-si*»https://www.youtube.com/watch?v=v_iywHNb0-g&t=10s. [*Nagorno karabakh: Life after War, A Documentary*]

12. Saralidze, Giya. «*Agdam*»: https://www.youtube.com/watch?v=48a3M8XmHUE. Film Gia Saralidze.

13. Tihonov A., «*Strategiya obespecheniya bezopasnosti*». Kurs lekcij «Armiya i obshchestvo» «Krasnaya zvezda»., 05.02.2017: http://archive.redstar.ru/index.php/component/k2/item/32172-strategiya-obespecheniya-bezopasnosti: [«Red Star». *Security Strategy*. Course of lectures «Army and society»] (in Russian)

14. SHnirel'man, V. A., «*Vojny pamyati: mify, identichnos' i politika v Zakavkaz'e*». Moskva, 2003, str. 120-122: [*Wars of Memory: Myths, Identity and Politics in Transcaucasia*.] (in Russian)

15. CBC TV Azerbaijan. *Predstaviteli zarubezhnyh SMI i dipkorpusa pobyvali v Karabahe*. [*Representatives of Foreign Media and Diplomatic Corps Visited Karabakh*] https://www.youtube.com/watch?v=x3ajCvL5y04 Forign Journalists visit to Karabakh.

THE POLITICS OF MEMORY AS A TOOL OF AZERBAIJAN'S ETHNO-POLITICAL STRATEGY AND ITS PROPAGANDA MANIFESTATIONS IN THE MEDIA

NAIRA HAMBARDZUMYAN
Yerevan State University,
Department of Print and Broadcast Media,
Faculty of Journalism, Ph.D. Student
Yerevan, the Republic of Armenia

In terms of anti-Armenianism, the Azerbaijani propaganda machine can be said to be constantly improving. After the war in Nagorno-Karabakh in 2020, it is distinguished by the use of even more crude tools of strategic communication, including an emphasis on the politics of memory from the means of psychological influence. In introducing this concept, it is particularly noteworthy that it is necessary to consider in its context information that is used to become memory, and memory that is used as an informational weapon. The target of the latter is the conscious field of social groups, and in this case it is used according to the interests of the military-political elite. A vivid proof of this is the observed factual materials, the comprehensive study of which will prove that Azerbaijan is trying to strengthen the victory in Nagorno- Karabakh in 2020 with the pretensions of victory in the mental war, using various means of influence, including the politics of memory. At the same time, the prevalence and possibilities of modern information technologies are used, unprecedentedly increasing the influence of media on the individual and society, which aims to make the mass consciousness a target for mythification. As a research method, the examination of the ways and tools used in documentary films, which are the result of the political order of Azerbaijan in the post-war period, and the study of reactions on social platforms around them were chosen. As a result, it became possible to single out materials that prove that in order to achieve its political goals, the military-political electorate of that country uses all possibilities, even involving influential representatives of the international media sphere.

Our study aims to highlight the need to ensure Armenia's informational supremacy on the information platform, and the risks that may arise from the point of view of further political developments surrounding the Karabakh conflict.

Keywords: *politics of memory, ethnopolitics, mental war, information-psychological war,social war, information supremacy, counter-combat journalism, Karabakh conflict.*

ПОЛИТИКА ПАМЯТИ–ИНСТРУМЕНТ ЭТНОПОЛИТИЧЕСКОГО ВОЛЕИЗЯВЛЕНИЯ АЗЕРБАЙДЖАНА И ЕГО ПРОПАГАНДИСТСКИЕ ПРОЯВЛЕНИЯ В МЕДИА

НАИРА АМБАРЦУМЯН
аспирантка кафедры печатных и вещательных СМИ
факультета журналистики
Ереванского государственного университета,
г. Ереван, Республика Армения

В деле антиармянской политики можно отметить что азербайджанская пропагандистская машина постоянно проходит пути совершенствования. После войны в Нагорном Карабахе в 2020 году она отличается применением еще более грубых инструментов стратегической коммуникации, в том числе, с акцентом из средств психологического воздействия на политику памяти. При представлении

этого понятия особенно примечательно то, что в ее контексте необходимо рассматривать информацию, которая используется для того, чтобы превратить ее в память, и память, которая используется как информационное оружие. «Мишенью» последнего является сознательное поле социальных групп, и в данном случае оно используется в соответствии с интересами военно-политической элиты.

Ярким доказательством сказанного являются рассмотренные фактические материалы, всеобъемлющее изучение которых т свидетельствовуют о том, что Азербайджан пытается закрепить победу в Нагорном Карабахе в 2020 году претензиями на победу в ментальной войне, применяя различные средства воздействия, в том числе, политику памяти. В то же время используются распространенность и возможности современных информационных технологий, беспрецедентно увеличивая влияние средств массовой информации на личность и общество, что имеет цель сделать массовое сознание мишенью мифизации.

В качестве исследовательского метода нами было выбрано исследование методов и инструментов, использованных в документальных фильмах, являющихся результатом политического заказа Азербайджана в послевоенный период, изучение реакции на них на социальных платформах. В качестве результата стало возможным выделить материалы, свидетельствующие о том, что для достижения своих политических целей военно-политическая элита этой страны задействует все возможности, вплоть до привлечения влиятельных представителей международной медиа сферы.

Цель нашего исследования — подчеркнуть необходимость опережения и обеспечения информационного превосходства Армении на информационной площадке и те риски, которые могут возникнуть с точки зрения дальнейших политических развитий вокруг Карабахского конфликта.

Ключевые слова: *политика памяти, этнополитика, ментальная война, информационно-психологическая война, социальная война, информационное превосходство, конфликтная журналистика, карабахский конфликт.*